№ 27 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 7 — 1895 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 7 № 27

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ Արտասահմանում 10 բուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը, 2 ր., ամսական 1 բուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ:

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պ. Ա. Իզմայլեան. Հայ կոլօնիաները. Հայկական քննիչ յանձնաժողով. Թիւրքերի ֆանատիկոսութեան մի նոր ապացոյց.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պէտք է նախօրօք հոգալ. Լեոն վարդապետ Խոջայեանի յիշատակին. Նաւթարդիւնաբերողների ժողովը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքաց բարքերից. Նամակ Թիւրքիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սասուն.

Պ. Ա. ԻԶՄԱՅԼԵԱՆ

Մի ամբողջ շաբաթ սրատարոփ սպասելուց յետոյ, Թիֆլիսի հասարակութիւնը մարտի 5-ին, Պետերբուրգից ստացաւ քաղաքագլուխ Պօղոս Իզմայլեանի մահվան ախուր լուրը:

Գնալով Պետերբուրգ, իբրև մեր քաղաքի ներկայացուցիչ, շնորհաւորելու Նոցա կայսերական Մեծութիւնների պսակադրութիւնը, Իզմայլեան ինֆլուէնցա ստացաւ, որը փոխվեց թոքերի բորբոքումի և հազիւ մի շաբաթ անցած, նա գոհ գնաց այդ ծանր հիւանդութեան:

Կորուստը զգալի և ծանր է ամբողջ քաղաքի ազգաբնակութեան համար, առանց խարութեան ազգութիւնների և դասակարգերի, որոնց ծառայութեանը՝ հանգուցեալը նուիրել էր իր բոլոր ոյժերը, համարեա քսան տարի շարունակ:

Պօղոս Իզմայլեան ծնվեց Երևան քաղաքում, ուր նրա հայրը ծառայում էր, 1852 թուին: Գիմնազիական ուսումը աւարտելով Թիֆլիսում 16 տարեկան հասակում, նա մտաւ Պետերբուրգի համալսարանը, սակայն դեռ ուսումը չաւարտած, ստիպվեց թողնել համալսարանը և վերադառնալ Թիֆլիս:

Եռանդոտ, զգայուն, սիրահար հասարակական գործունէութեան և զրականութեան, նա եօթանասնական թուականներին մտաւ մեր առաջադէմ ինտելիգենցիայի շրջանը, որ այն ժամանակ խմբված էր „Մշակի“ շուրջը և մի քանի տարի աշխատակցեց „Մշակին“, աջողութեամբ վարելով լրագրի արտաքին տեսութեան բաժինը: Մի քանի ժամանակից յետոյ Իզմայլեանը թողեց Թիֆլիս և գնաց Պարիզ, բայց այնտեղ երկար չը մնաց, և վերադառնալով Թիֆլիս, ոտք դրեց քաղաքային ինքնավարութեան ասպարէզի մէջ, իբրև քաղաքային դումայի քարտուղար:

Այդ օրից արդէն Իզմայլեան այլ ևս չը բաժանվեց մեր քաղաքային ինքնավարութիւնից, և անընդհատ ծառայեց քաղաքին, սկզբում իբր քարտուղար, ապա իբր ուպրավայի անդամ, յետոյ իբր քաղաքագլխի փոխարինող, և վերջապէս 1893 թուին, մեծ աղմուկներից և բուռն ագիտացիայից յետոյ, ընտրվեց Թիֆլիսի քաղաքագլուխ:

Ճշմարիտ է, ընդամենը երկու տարի է, որ նա հանդէս է եկել իբրև քաղաքի գործերի բացարձակ ղեկավար, իբրև քաղաքագլուխ, բայց առաջ էլ, նախորդ երկու քաղաքագլխների օրով, երբ նա միայն փոխարինողի պաշտօն էր վարում, նա էր իսկապէս քաղաքային վարչութեան գործերի ղեկավարը, նրան ուղղութիւն տուողը, նրա ոգին: Վերջին 10—15 տարվայ ընթացքում քաղաքային ինքնավարութեան շատ գործերը, նախագծերը, ձեռնարկութիւնները կամ Իզմայլեանի աշխատանքի պտուղներն են, կամ նրա եռանդուն մասնակցութեամբ գլուխ բերած...

Ամբողջապէս նուիրվելով քաղաքային գործերին, Իզմայլեան երբէք չէր մոռանում մեր ընթացիկ հասարակական գործերը, և ամեն տեղ, ամեն ժողովում, ամեն ձեռնարկութեան մէջ միշտ մասնակցում էր, երբեմն զրչով, գլխաւորապէս „Новое Обозрѣніе“ լրագրի էջերում, երբեմն խօսքով, իբր ժողովների նախագահ և ընտրութիւնների ղեկավար:

Ճշմարիտ է, կեանքի ծանր հանգամանքները և տարիքը ճնշեցին Իզմայլեանին. նա շատ բաներում փոխվեց, շեղվեց իր նախկին ուղղութիւնից,—բայց մինչև իր կեանքի վերջն էլ պահպանեց իր տոկունութիւնը, մտքի ոյժը և անսպառ եռանդը...

Ահա մի մարդ, որ հասաւ քաղաքագլխի պաշտօնին միմիայն իր աշխատասիրութեան և ընդունակութիւնների շնորհիւ: Նա այն տեսակ քաղաքագլուխներից չէր, որոնք բազմում են քաղաքագլխի աթոռի վրա, կամ իրանց կապերի, կամ անդոյնութեան շնորհիւ. ընդհակառակը, նա սկսեց ամենափոքր պաշտօնից — քարտուղարութիւնից, և երկար տարիներ անընդհատ աշխատելով, տոկունութեամբ կռիւ մղելով, քրտինք թափելով, աստիճանաբար բարձրացաւ և հասաւ Կովկասի մայրաքաղաքի քաղաքագլխի պատուաւոր պաշտօնին:

Այդպիսի մի քաղաքացու կորուստը անկասկած զգալի է և ծանր ոչ թէ միայն քաղաքային ինքնավարութեան համար, այլ ամբողջ քաղաքի ազգաբնակութեան համար:

ՀԱՅ ԿՕԼՕՆԻԱՆԵՐԸ

—

Դեկտեմբեր ամսին, երբ ամենայն Հայոց Կաթողիկոսը դուրս եկաւ Էջմիածնի վանքից, ճանապարհորդելու նպատակով, մենք այն կարծիքը յայտնեցինք, որ անկասկած, այդ ճանապարհորդութիւնը շատ լաւ հետևանքներ կարող է ունենալ, և շատ հարցեր կարող է պարզել:

„Հասարակութեան շատ ցանկութիւնները և առաջարկութիւնները,—ասեցինք մենք այն ժամանակ „Մշակի“ էջերում,—որոնք դուցէ չեն հասնում մինչև Էջմիածնի վեհարանը, զանազան հարցեր, որոնց մասին դժուար է ժողովրդից կտրված Էջմիածնի մէջ որոշ դաղափար կազմել, այստեղ, բուն ժողովրդի մէջ, լսելի կը լինեն, կը պարզվեն և դուցէ կանոնաւոր և ցանկալի ընթացք կը ստանան“:

Դրա համար հարկաւոր է միայն, որ ամենայն Հայոց կաթողիկոսի դռները ամեն տեղ բաց լինեն ժողովրդի բոլոր դասակարգերի համար, հարկաւոր է, որ ժողովրդի ցանկութիւնները և կարծիքները ուղիղ, առանց արգելքներին հանդիպելու և աղաւաղումների ենթարկվելու նրա ականջին հասնեն, որպէս զի նա կարող լինի ճիշդ դաղափար կազմել ժողովրդի տրամադրութեան, հայեացքների և ցանկութիւնների մասին:

Վեհափառ կաթողիկոսը այժմ ճանապարհորդում է հարաւային Ռուսաստանում, ուր հիմնված են բազմաթիւ հայ կոլօնիաներ, և ուր ապրում են մեծ թիւով հայեր: Մեզ միանգամայն հասկանալի է այն բուռն հետաքրքրութիւնը, որով ներշնչված են հայ կոլօնիաները՝ եկատերինոդար, Արմաւիր, Նոր-Նախիջևան, իրանց մէջ տեսնելով հայոց եկեղեցու ներկայացուցչին: Կտրված լինելով հայաբնակ կենտրոններից, լինելով հեռու Էջմիածնից, որի անունը հեռաւոր հայերի ականջին աւելի քաղցր է հնչում, երբէք առիթ ունեցած չը լինելով տեսնել հայոց կաթողիկոս, անկասկած, հայ կոլօնիաները շատ երջանիկ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՍՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

I

Երկրի դիրքը:—Լեռները, Անդօք, Կօրդուք, Մովասար, Մարաթուք սարերը:—Գաւառակներ Շատախ, Դալւօրիկ, Ղիանք, Ղուլփ, Խութ:—Գիւղերը:

—

Լեռնային այն երկիրը, որ կոչվում է Սասուն, ուր տեղի ունեցան 1894 թուին, ամառը, տխուր անցքեր, աւերումներ և կոտորածներ, գտնվում է Բիթլիսի նահանգում, Վանի լճից դէպի արևմուտք և հարաւ-արևմուտք, Մուշ քաղաքից դէպի հարաւ:

Սասունը լեռների, ժայռերի, խութերի, անթիւ ձորերի, կիրճերի, քարանձաւների մի կուտակում է, ուր տեղ-տեղ բացվում են փոքրիկ հարթութիւններ երկրագործութեան համար, սարաւանդներ՝ անասունների հօտերը արածացնելու համար:

Այդտեղ ժողովուրդը դժուարութեամբ է հայթայթում իր ապրուստը: Դարերի ընթացքում կապած, բևեռված լինելով հայրենի երկրին՝ նա խլել է բնութիւնից բոլոր այն խորշերը, ուր կարող էր նա սերմ գցել հաց ստանալու համար, ծառեր տնկել՝ պտուղներ արդիւնաբերելու համար: Շատ տեղ նա արհեստական արտեր է շինել, քար ու կրով ամրացնելով նրանց եզերքները, պատնէշներ կանգնեցնելով հեղեղների կործանիչ ոյժը կոտրելու համար:

Խոր ուսումնասիրութեան արժանի է Սասունի ժողովրդի տնտեսական և առանին կեանքը: Նա պարունակում է իր մէջ շատ բնորոշ, հետաքրքիր կողմեր, որոնք լոյս են սփռում թէ Սասունի և թէ նոյն պայմաններում ապրող ժողովուրդների կենցաղավարութեան առանձնայատկութիւնների վրա:

Ներկայ յօդուածով մենք կամենում ենք ուսումնասիրութեան մի սկզբնական փորձ արած լինել: Մենք ժողովեցինք մեր տեղեկութիւնները այն սասունցի պանդուխտներից, որոնք 1894 թուի կոտորածից յետոյ, թափառելով զանազան տեղեր, հասել էին և Անդրկովկաս: Նրանց միջոցով և քարտէզների օգնութեամբ կազմեցինք և այն աշխարհագրական ուրուագիծը, որ կը ցուցում ենք մեր յօդուածին:

Սասունցիները իրանց երկիրը անուանում են Գաւառ: Հին Սասունը գտնվում է այդ Գաւառի ծայրում և մի փոքրիկ գիւղ է, որի բնակիչները քիւրդեր են:

Սասունի լեռների ամենամեծ բարձրութիւնը Անդօք սարն է: Վերջին կոտորածի ժամանակ Անդօք սարը վերջնական ապաստանատեղն էր թիւրք զօրքերով և քիւրդ հրոսակներով պաշարված հայ գիւղականների համար:

Անդօք սարը գտնվում է մի լեռնաշղթայի վրա, որ ձգվում է դէպի արևմուտք և հարաւ-արևմուտք: Այդ լեռնաշղթայի վրա բարձրանում են նախ Քեփի սարը, յետոյ Արքնաղբիւր, Կանիէղարսէ, (կոչվում է նոյնպէս Հեղինի սար) բարձրութիւնները:

Եթէ բարձրանանք Անդօք սարի ծայրը և նայենք շրջակայքը, մեր առաջ կը ներկայանայ հետևեալը.

Հիւսիսում անցնում է մի լեռնաշղթայ, արևմուտքից դէպի արևելք ուղղութեամբ, որ կոչվում է Կ օ ր դ ո ւ ք: Այդ շղթան բաժանում է Մուշի երկիրը Սասունի լեռնագաւառից: Հարաւում կուտակված են Դ ա լ ւ օ ր ի կ ի սարերը, որոնցից նշանաւորներն են Մերգիր և Սպիտակ սարերը: Հիւսիս արևելքի հորիզոնում մթնանում են Խ ո ւ թ ի լեռները: Արևելքում և դէպի հարաւ-արևելք զետեղված են Մ ո վ ա ս ա ր ը իր լայնանիստ լանջերով: Հեռու հարաւ արևելքում և հարաւում երևում է Մ ա ր ա թ ո ւ ք ը:

Լեռնային այս բոլոր երկիրը բաժանված է փոքրիկ գաւառակների: Անդօքը իր հիւսիսային ստորոտներով գտնվում է Շ ա տ ա խ ի մէջ, որ շարունակվում է դէպի արևելք և հարաւ-արևելք: Դալւօրիկի լեռներում զետեղված գիւղերը մըտնում են Դ ա լ ւ օ ր ի կ գաւառակի շրջանը: Դալւօրիկից դէպի արևմուտք ձգվում է Ղ ի ա ն ք կամ Խիանքը, որի հիւսիս-արևմուտքից սկսվում Ղ ո ւ լ փ կամ Խուլփ կոչված գաւառակը:

Շատախի վերին մասում, Անդօքից դէպի հիւսիս գտնվում են Գ ե լ ի ե գ ո ւ զ ա ն, Այ լ ա ն, Շ ե ն ը կ, Ս ե մ ա լ, Գ ե լ ի ե գ ե ն մ ա ն գիւղերը, որոնք վերջին աղէտի ժամանակ կազմում էին հայերի և քիւրդերի ու թիւրքերի ընդհարման կենտրոնը:

Այդ գիւղերից ամենանշանաւորը և ամենամեծն է Գ ե լ ի ե գ ո ւ զ ա ն գիւղը, որ ունի 200-ից աւելի տներ: Գիւղը գտնվում է ձորում և գետակով բաժանված է երկու մասի: Գետակը, որ կոչվում է Անդօքա-ջուր կամ Կանիեբաջի, բղխում է Անդօք սարի խորշերից և մտնելով մի խոր ձոր՝ անցնում է նախ Գելիեգուզանի միջով, յետոյ թեքվելով դէպի արևելք և հարաւ՝ գնում է քիւրդերի երկիր: Շենկ ու Սեմալ գիւղերի մօտով էլ անցնում են գետակներ, բայց համեմատաբար փոքր: Ջուրը այնքան առատ է, որ կարողանում են ջրաղացներ բանեցնել: Գելիեգուզանը ունի եօթը ջրաղաց, Շենկ և Սեմալը՝ երկու երկու ջրաղաց:

Գելիեգուզան գիւղը շատ յարմար դիրք ունի պաշտպանվելու համար: Ձորի եզերքները, որի խորութեան մէջ ընկած է գիւղը, բարձր են և կարողութիւն են տալիս յետ մղել յարձակվողներին, թափել նրանց վրա գնդակների մի ամբողջ կարկուտ և միևնոյն ժամանակ աղատ մնալ թշնամիների հարուածներից: Մինչդեռ Շենկ և Սեմալ գիւղերը յարմար դիրք չունեն պաշտպանվելու համար: Ուստի երբ սկսվեց Շենկ և Սեմալ գիւղերի շրջանում 1894 թուի ընդհարումը, այդ գիւղերի բնակիչները չատպեցին Գելիեգուզան և այդտեղ կարողացան մաքառել կատաղի հրոսակային արշաւանքի դէմ ամբողջ երեք շաբաթ:

Շենկի և Սեմալ գիւղերից սկսվեց քիւրդերի հետ առաջին մասնաւոր ընդհարումը, որ յետոյ իբրև մի կայծ՝ հրդեհեց շրջակայքը, անցնելով Գելիեգուզան, Աղբիկ գիւղերով դէպի Դալւօրիկի և մասամբ Ղիանքի գիւղերը: Շենկ և Սեմալ գիւղերը յայտնի են իրանց խաչնարածութեամբ՝

պէտք է զղային իրանց, տեսնելով իրանց շրջանում վեհափառ Կաթողիկոսին։

Սակայն մենք բոլորովին չէինք ցանկանայ, որ լոկ հետաքրքրութեամբ և անցողական ոգևորութեամբ էլ վերջանար ամեն բան։ Մեր Թղթակիցների հաղորդած տեղեկութիւններից երևում է, որ այդ հայ կոլօնիաները շատ տեղ դպրոցներ չունեն, որ շատերը, նոյն իսկ Արմաւիրի պէս տեղում, հայերէն չը գիտեն, այնպէս որ Կաթողիկոսի քարոզը ստիպված էին չէ բքէզերէն թարգմանել, որ ժողովուրդը հասկանայ և այլն և այլն։

Գովելի է ամեն մի ազնիւ ոգևորութիւն, —բայց երբ նա վայրկենաբար բռնկվում և անցնում է,—նա դառնում է դատարկ ֆրազա, դատարկ հնչիւն... Եւ եթէ հարաւային Ռուսաստանի հայ կոլօնիաները չեն ուզում անցողական ոգևորութեամբ իրանց սփոփել, պէտք է աշխատեն օգուտ քաղել հայոց Կաթողիկոսի ներկայութիւնից, և մի որ և է հասարակական օգտաւէտ գործ կատարել։ Հարուստ հայեր հայ կոլօնիաների մէջ շատ կան։—Թող հանգանակեն իրանց մէջ մի խոշոր գումար, թող մի ֆոնդ կազմեն, և նրա տոկոսով դպրոցներ բանան այն կոլօնիաներում, որտեղ դպրոց չը կայ, որտեղ ժողովուրդը անգրագէտ է, որտեղ ժողովուրդը այն աստիճան տգէտ է մնացել, որ մայրենի լեզուն մոռանալով, չէ խօսում զէթ մի այնպիսի կուլտուրական լեզու, ինչպէս պետական ռուս լեզուն, այլ մի այնպիսի վայրենի ցեղի լեզու, ինչպիսին է չէրքէզերէնը...

Հաւատանք, որ հարաւային Ռուսաստանի հայ կոլօնիաները ընդունակ են մի այդպիսի գովելի գործ կատարել, թէ պէտք է գանք այն եզրակացութեան, որ նրանք էլ, ինչպէս և ուրիշ շատ տեղերի հայեր, ընդունակ են միմիայն դատարկ ոգևորութեան, իսկ գործ՝—երբէք։

ՀԱՅԿԱԿԱՆ ՔՆՆԻՉ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

I

Ֆրանսիական «Paris» լրագրին գրում են Լոնդոնից, թէ «Daily Telegraph» լրագրի Թղթակիցը պնդում է, որ Սասունի կոտորածը վերջնականապէս ճշդվել է քննիչ յանձնաժողովի կողմից և այժմ մնում է միայն որոշել, թէ ով է եղել այդ կոտորածի բուն հեղինակը։ Թիւրքերը, աւելացնում է Թղթակիցը, շարունակում են սպառնալ հայերին։

II

Ֆրանսիական «Indépendance Vosgienne» լրագրի մէջ կարդում ենք հետևեալը. «Փետրվարի 23-ից, Մուշից ստացված մի հեռագիր հաղորդում է, թէ Թիւրքերը ամեն ջանք գործ են դնում անհետացնել այն մեծ փոսը, որի մէջ թաղված են հարիւրաւոր յօշոտված դիակներ։ Լրագիրը աւելացնում է, որ կոտորածի մանրամասնութիւնները վերին աստիճանի վրդովեցուցիչ են և բոլգարական գաղանութիւնները ոչինչ են նրանց համեմատութեամբ։

III

«Անգլիական լրագիրների Թղթակիցները Նեռագրով հետևեալ տեղեկութիւններն են հաղորդել Լոնդոն.

«Թղթակիցները աւելի պակաս ենթարկված լինելով Թիւրք կառավարութեան խանգարիչ միջամտութեան, քան թէ քննիչ յանձնաժողովը, կարողացան թափանցել Սասունի կոտորածին վերաբերեալ դաղտնիքների խորքը։ Նրանց աջողվեց ձեռք բերել կռւի մասին Կ. Պոլսից եկած թղթերն ու հրամանագրերը։

«Թղթակիցները հաստատում են, որ հայերին կոտորելու մասին լրագիրների մինչև այժմ հրատարակած տեղեկութիւնները անպայման ճիշդ են։

«Քննիչ յանձնաժողովի մասին Թղթակիցները հաղորդում են, որ Թիւրքաց կառավարութիւնը թոյլ չը տուեց, որ յանձնաժողովը կատարի իր պարտաւորութիւնները ինչպէս հարկն էր։ Կառավարութիւնը այնքան արգելքներ հանեց և այնպէս կաշկանդեց յանձնաժողովի գործունէութիւնը, որ վերջինս համար հնարաւոր չեղաւ որոշ հետևանքի ու եզրակացութեան հանել և ստիպված եղաւ թողնել ու հեռանալ։

IV

Անգլիական համայնքների ժողովում սըր Էդուարդ Գրէյ յայտարարեց Թիւրքաց Հայաստանում տեղի ունեցած անցքերի առիթով, որ միջազգային քննիչ յանձնաժողովի անգլիական դեկեղատներին, Մուշ, կռւզարկվեն Թիւրքերին մերկացնող Թղթակցութիւնները Հայաստանից, որոնք տպված են «Daily Telegraph» լրագրում։

ԹԻԻՐՔԵՐԻ ՖԱՆԱՏԻԿՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐ ԱՊԱՑՈՅՑ

(«Les Nouvelles d'Orient»)

«Այս օրերս Կ. Պոլսում, Գում-Գափուի պատրիարքարան եկաւ մի լաւ հագնված Թիւրք, որը ցանկութիւն յայտնեց տեսնել հայոց պատրիարք Իզմիրլեանին։

«Երբ նրա անունը հարցրին, Թիւրքը պատասխանեց, որ իր անունը այն ժամանակ միայն կասի, երբ կը թոյլ տան իրան մտնել նորին սրբազնութեան մօտ։ Այդ պատասխանը կասկածելի երևաց, ուստի պատրիարքարանում երկիւղ են կրում, որ կարող է սպանութեան փորձ լինել պատրիարքի կեանքի դէմ նրա դէմ գրգռված մահմեդականների կողմից։

«Այդ պատճառով մանրաղնին խուզարկութեան ենթարկեցին երիտասարդ Թիւրքին և նրա մօտ գտան դանակ, երկու դաշոյն և երկու ատրճանակ։ Թիւրքին յանձնեցին կառավարութեանը, որը, սակայն չուտով արձակեց նրանց։»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՊԷՏՔ Է ՆԱԽՕՐՕՔ-ՀՈԴԱԼ

Մի զարմանալի անտարբերութիւն է նկատվում դէպի մի այնպիսի կարևոր և հիմնական խնդիր, ինչպէս է մեր դպրոցների խնդիրը։

Առաջիկայ ուսումնական տարվայ համար վաղօրօք պատրաստութիւններ են հարկաւոր, որպէս զի սեպտեմբեր ամսին մեր դպրոցները կարողանան սկսել իրանց կանոնաւոր գործունէութիւնը, առանց ընդհատելու։

Ուսուցիչների բաւականաչափ թիւ ունենալու համար անցեալ տարի Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութիւնը տալիս էր նպաստներ այն ուսուցիչներին, որոնք ցանկութիւն էին յայտնում պատրաստվելու և հարցաքննութիւն տալու, որպէս զի ցենզ ձեռք բերեն։ Այդ ուսուցիչներից մի քանիսը տուին աջող հարցաքննութիւն և ստացան ցենզի վկայականներ, մնացածները ցրվեցին դպրոցները և զբաղվեցին դասատուութեամբ։

Մինչդեռ դպրոցների համար ուսուցիչների պակասութեան խնդիրը մնում է առաջվան պէս չը լուծված և շատ դպրոցներ կարող են մնալ առանց ուսուցիչների, կամ չունենալ ուսուցիչների բաւականաչափ թիւ։

Մեր առաջ հինգ վեց ամիս ժամանակ կայ, որի միջոցին շատ ուսուցիչներ կարող են, եթէ եռանդուն կերպով աշխատեն, այնքան պատրաստվել, որ աջող հարցաքննութիւն տան։ Միւս կողմից կարելի է գիմնազիօններում աւարտած ուսանողներից, որոնք աւելի դիրութիւն ունեն պետական օրէնքով պահանջվող հարցաքննութիւն տալ, կազմակերպել մեր դպրոցների համար ուսուցիչների խմբեր, յարմար մեր եկեղեցականծխական դպրոցների պահանջներին և ծրագրին։

Կարելի է դէպի մեր դպրոցական գործը գրաւել և բարձրագոյն դպրոցներում ուսանող երիտասարդներին, դիւրութիւններ ընծայելով նրանց, փոքր ի շատէ մարդավարի կերպով ապահովելով նրանց ապրուստը։

Կարելի է օգնել գործին, եթէ ոչ ամբողջովին, այնուամենայնիւ բաւական մեծ ծաւալով։ Միայն պէտք է այդ մասին հոգալ և լուրջ կերպով այդ գործով զբաղվել։

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՕՋԱՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

Երիտասարդ Լեոն վարդապետ Խօջայեանի մահը, ինչպէս այդ երևում է Կովկասի զանազան քաղաքներից մեր ստացած նամակներից,—անկեղծ ցաւ է պատճառել մեր հասարակութեան։ Ամենքն էլ վկայում են, որ յանձին այդ ազնիւ վարդապետի, մեր հոգևորականութիւնը կորցրեց վերին աստիճանի օգտաւէտ և հազագիւտ մի անդամ։ Թիֆլիսի հասարակութեան ցոյց տուած բուռն ցաւակցութիւնը, ոչ թէ միայն մեր, այլ մեզ հետ միասին տեղական ռուս լրագիրների արտայայտած համակրութիւնը դէպի հանգուցեալը, նրա թաղումը, որին ներկայ էր խուռն բազմութիւն ժողովրդի բոլոր դասակարգերից, և վերջապէս մեր գաւառական հասարակութեան արտայայտած վիշտը՝ կենդանի ապացոյց է, որ ազնիւ, անձնուէր գործիչը, ինչ շրջանին էլ պատկանի նա, ինչքան էլ նրան չը զրպարտեն, ինչքան էլ նրան չը բամբասեն, միշտ կարող է յոյս դնել հասարակական անկաչառ համակրութեան վրա։ Թող դա լինի միւսների համար օրինակ, և ոգևորութեան աղբիւր։

«Համակրութեան նշաններ են և այն հոգեհանգիստները, որ կատարվել են զանազան տեղերում։ Այդ հոգեհանգիստների մասին մենք ստացանք հետևեալ հեռագիրներ.

Ախալքալաքից, մարտի 5-ից. «Այսօր հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ իդէալիստ Լեոն Խօջայեանի յիշատակին, որ անձնական կեանքի շահերը և հոգսերը զոհեց սիրոյ խաղաղ գործին, օտարի վչտի հոգսին և որը տգիտութեան զոհ դարձաւ ու մեռաւ՝ խաբված յոյսերի ծանր զգացումով։»

Կարսից, մարտի 5-ից. «Այսօր բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ հոգեհանգիստ կատարվեց վաղամեռ և վեհ ձգտումներով լի Խօջայեան վարդապետի յիշատակին. երիտասարդութիւնը անկեղծ կերպով ողբում է գաղափարի եռանդուն մարտնչողի մահը։ Տէր-Պետրոսեան քահանան մի ազդու ճառ խօսեց»։

Իգդիրից, մարտի 6 ից. «Երէկ, ուսուցչական խմբի նախաձեռնութեամբ, Արշարունի վարդապետը հոգեհանգիստ կատարեց անմոռանալի Լեոն վարդապետի համար։ Ողբում ենք լուսաւոր իդէաների համար չարչարվող համեստ, բարի, հայրենի եկեղեցու մշակի մահը, նրան, որ այնքան անդութ կերպով հալածվեց ճակատագրից։»

Ղզլարից, մարտի 5-ին. «Այսօր հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Լեոն վարդապետ Խօջայեանի յիշատակին։»

Մոսկվայից. «Այսօր, մարտի 5-ին, հոգե-

Այդ գիւղերը գտնվում են այն ճանապարհի վրա, որով գելիեգուզանցիները գնում են Մուշ։

Շենրկ գիւղի հողի սահմանում գտնվում է մի խոտաւէտ ընդարձակ մարգագետին, որ կոչվում է Մրկեմուզան։ Այդ մարգագետնումն էր վրան զարկել Թիւրքաց զինուորների այն վաշտը, որ 1894 թի գարնանից ուղարկված էր Նախօրօք ապագայ աղէտի տեղը և հետամուտ էր լինում այն բոլոր գործողութիւններին, որ տեղի էին ունենում Սասունի լեռներում և որ զբաղված էր քիւրդերին զինելով քրիստոնեայ տարրի հետ կռուելու համար։

Եթէ Շենրկից և Սեմալից գնանք դէպի Շատախի ստորին գիւղերը, ճանապարհի վրա և նրանից դուրս կը հանդիպենք Անթանիա, Բոփ, Բեղաչէն գիւղերին։ Բոփի կողմից գալիս է մի փոքրիկ ջուր և խառնվում Անդօքա ջրի հետ։

Շատախի բնակիչները հայեր են։

Շատախից դէպի արևելք և հիւսիս-արևելք ձգվում է խուռթ գաւառակը, որի բնակիչները նոյնպէս մեծ մասամբ հայեր են։ Խուռթի շրջանում կան և լայնատարած սարահարթեր, օրինակ ս. Աղբրիկից վերև։ Ինքը ս. Աղբրիկը նշանաւոր սրբութիւն է համարվում շրջակայ գիւղերի համար, որոնք ուխտադնացութիւն են անում դէպի այնտեղ։

Այն խոր ձորը, որի միջով անցնում է Անդօքաջուր գետակը, թողնելով Գելիեգուզան գիւղը, անցնում է Դալւորիկի միջով և յայտնի է ժողովրդի մէջ Դալւորիկի ձոր անունով։ Այդ ձորը բաժանում է Դալւորիկի գիւղերի մեծ մասը դրսի աշխարհից և ընդհարումների միջոցին պաշտպանում է երկիրը թշնամիների յարձակումներից։ Հնորհիւ այն սուր և ուղղահայեաց եզերքներին, որոնք իրանց ժայռոտ կողերով անկարելի են դարձնում մարդկանց և անասունների երթևեկութիւնը։

Այդ ձորի մէջ յայտնի է Սատանի կամուրջ անուանված տեղը, որ գտնվում է մերձաւորապէս Եղդարթ գիւղի գծի ուղղութեամբ և որ լինելով հաղորդակցութեան տեղ՝ կարող է միևնոյն ժամանակ թշնամիներին չարաչար ծեծելու մի կէտ նկատվել։ Եւ լեռնական ժողովուրդը յաճախ օգտվել է անցնելում այդ կամուրջի վրա աջողացնելու օտարների ցանկութիւնը՝ մտնել Դալւորիկի երկիրը։

Ձորից դէպի ձախ ձգվող տարածութեան վրա քիչ գիւղեր կան, Հեթինք, Աղբիկ կամ Աղբինք և մի երկու ուրիշ բնակութիւններ։ Գիւղերի մեծ մասը գտնվում է այն լեռնային տարածութեան վրա, որ գտնվում է ձորից դէպի աջ։ Այդ գիւղերից նշանաւորներն են՝ Դալւորիկ, Հլօղինք, Սպղանք, Հօանուտ, Հարթք, Հաքմաք։ Կան և փոքրիկ գիւղեր, ինչպէս Փորխ և Դվալին։

Դալւորիկը Մերդիր և Սպիտակ սարերով բաժանված է Ղիանքի գիւղերից։ Ղիանքի մէջ յայտնի է Իշխնձոր գիւղը, որ վերջին կոտորածի ժամանակ մեծ մասնակցութիւն ունեցաւ. նա բազմամարդ գիւղ է, մօտ 80 տնից բաղկացած։ Ղիանքի գիւղերի մէջ յիշենք Արագունք, Սաղդուն, Հեղին, Մաղրէ, Կարմիր Արտ և Ընկուզնակ գիւղերը։

Ընկուզնակ և Հեղին գիւղերը գտնվում են մի և նոյն գետակի վրա, որ սկիզբն է առնում Արքնաղբիւրի և Անդօքա շղթայից։ Այդ շղթան պատոյտ անելով, իր կողերով հասնում է արևմտեան կողմից մինչև Հեղինի սահմանները։ Այստեղ, Հեղնից վերև, կանիէզարսէ սարերում ընկաւ Շենրկ գիւղի ոչխար քաջ Գրգօն, սասունցիների պարծանքը, երբ թողեց Անդօք սարը, ուր պաշտպանվում էին երկար ժամանակ սասունցիները և ելք էր որոնում թշնամիների ձեռքից ազատելու իր խումբը։

Ղուլփի գաւառակը համարեա չէր մասնակցում վերջին կոտորածին, բայց նա էլ ենթարկվեց աւերումների թէ քիւրդերի և թէ զորքի կողմից։ Ղուլփի մերձակայ մասում յայտնի են Գեղարվան, Ահրօնք գիւղերը, փոքր ինչ հեռու՝ Էհուբ, Մսըրձոր, Ընձքար գիւղերը և այլն։ Ղուլփի մէջ շատ կան քիւրդեր, որոնք կազմում են ամբողջ ազգաբնակութեան մի երրորդական և կէս մասը։

Սասունի գիւղերը շատ անգամ կազմված են լինում մի քանի թաղերից կամ բաժիններից, որոնք ունենալով իրանց մասնաւոր անունները, միասին յայտնի են գիւղի ընդհանուր անունով։ Այդ հանգամանքն է պատճառ այն մեծ զանազանութեան, որ կան վիճակագրական թուերի մէջ։ Մէկը հաշւում է, օրինակ, Դալւորիկ գիւղի տների թիւը 30—40, միւսը հաստնում է մինչև 200—220-ի։ Դա նշանակում է, որ բուն կենտրոնական գիւղը ունի 30—40 տուն, իսկ թաղերով միասին 200—220։

Այստեղ առաջ ենք բերում գիւղերի մեծութեան վերաբերեալ հետևեալ վիճակագրական տեղեկութիւնները։ Գելիեգուզան գիւղը ունի բուն գիւղում մօտ 200, իսկ շրջակայ տեղերով մօտ 350 տուն. Շենրկ՝ մօտ 100, Սիմալ՝ մօտ 80, Այլան՝ մօտ 160, Գելիեգենման 30—40 տուն։

Դալւորիկը ունի բուն գիւղում 30—40, շրջակայ տեղերով մինչև 180—200 տուն, Հաքմաք բուն գիւղում 20—25, շրջականերով մինչև 80 տուն, Սպղանք 80, Աղբիկ 65, շրջականերով 150 տուն, Հեթինք 60—70, Դվալինք 15—20, շրջականերով մինչև 60—70 տուն, Հարթք 20, շրջականերով մօտ 50, Հլօղինք 40, Փորխ 15, Հօանուտ 15 տուն։

Ղիանքի մէջ Իշխնձորը ունի 70—80, շրջականերով 170—200 տուն, Ընկուզնակը 60, Սեթը 70, Արագունք 80, Կարմիր Արտ 20, Մաղրէ 30, Սաղդուն 200, Փարգա 300, Հեղին 80 տուն։

Ղուլփի մէջ Գեղարվանը ունի 60—70 տուն, Ահրօնք 150—160, Ընձքար 240, Կօկնաձոր 35 տուն և այլն։

Աւելացնենք դրանց վրա և հետևեալ գիւղերը. Սաֆօի տուն 17, Արզիկ 80, Շուղիկ 20, Շուշնամերկ 30, Բեղաչէն 40, Ներքին Կալիկ 30, Փոշկանձիք 15, Կիպերնին 30, Տավքար 30 տուն և այլն։

Այս թուերը ճիշդ են միայն մերձաւորապէս, որովհետև վիճակագրված են ընդհանուր ձևով, պատմողների ստացած տպաւորութիւնների հիման վրա։ Ցամենայն դէպս յիշատակված գիւղերի շրջանում ապրում էին ոչ պակաս քսան հազար հոգի հայ, որոնցից մի նշանաւոր մասը կոտորվեց, կորաւ վերջին աղէտի ժամանակ, իսկ մնացածները ցրվեցին զանազան գիւղեր, սպասելով իրանց վիճակի պարզվելուն։

Ա. Ք.

Յաւելուած „Մշակ“ի № 27.

ԱՍՈՒՆ

Մասշտաբ 1/500.000

Թիֆլիս 1895



Дозвол. Цензур. 22 февраля 1895 Тифлисъ.

Лит. К. І. Месхіева въ Тифлисѣ.

Ամերիկայի Հայ Դաշնակցութիւնը

Ամերիկայի Հայ Դաշնակցութիւնը

Ամերիկայի Հայ Դաշնակցութիւնը

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 մարտի։ «Ռուսաց հեռագրական գործակալութիւնը» հնարաւորութիւն ունի հաղորդելու, որ խաղաղութեան բանակցութիւնները վարելու համար չինական լիազօր Լի-Խունգ-Զանգ ճանապարհ ընկաւ մարտի 2-ին (14) Եապոնիա։ Նա գնում է Սիմոնոսէկի նաւահանգիստը, Նիպոն կղզու վրա, ուր Տօկիօից կը գան եապոնական լիազօրները։ Բանակցութիւնները կը կատարվեն վերոյիշեալ նաւահանգիստում, սակայն տեղի չի ունենայ ոչ զինադադար, ոչ էլ կանգ կառնեն պատերազմական գործողութիւնները, մինչև որ երկու կողմերի լիազօրները կը ստորագրեն խաղաղութեան դաշնագիրը։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 3 մարտի։ Այստեղի համալսարանը տօնեց Կայսր Ալէքսանդր III-ի յիշատակը։ Սև կտորներով զարդարված ակտի դահլիճում հաւաքվեցին պրոֆէսօրները, ուսանողները և բարձր պաշտօնատար անձինք։ Պրոգրամի երաժշտական մասը կատարեցին ուսանողական օրկէստրը և խօրը։ Դոններ և Գէնէց պրոֆէսորները, չվէդերէն և ֆիններէն լեզուներով ճառեր արտասանեցին հանգուցեալ Կայսրի մասին։

ՐԻԳԱ, 3 մարտի։ Փակվելու դատապարտված աղնուականների իրմլավեան (Կուրլիանդիայի նահանգ) ուսուցչական սեմինարիան պահպանվում է, ռուսաց լեզուով դասաւանութիւն մտցնելով այնտեղ։

ՊԱՐԻԶ, 4 մարտի։ Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչ այսօր այցելութիւն գործեց հանրապետութեան նախագահին և դիմաւորվեց մեծ պատիւներով։

ՍՕՖԻԱ, 3 մարտի։ Ցանկով ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։ Կօբուրգեան պրինցը մերժեց նրան ունկնդրութիւն շնորհել ճանապարհ ընկնելուց առաջ։

ԼՕՆԴՕՆ, 3 մարտի։ Հեռագիր Եօկօհամայից. փետրվարի 27-ին, Կիուլենչինգի շրջականներում եապօնացիները ամբողջ օրը պատերազմում էին չինացիների հետ։ Չինացիները պատերազմի դաշտից յետ չը քաշվեցին։ Եապօնացիները վերադարձան Զինկուանգ։ Չինացիների կողմից սպանվեցին 70 մարդ։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 3 մարտի։ Շանդհայից հաղորդում են, որ չինացիների պատերազմական տուգանքի համար որպէս երաշխաւորութիւն կը ծառայեն մաքսային տուրքերը, իսկ վճարումները կը կատարվեն հինգ տարվայ ժամանակամիջոցում։ Չինացիները, ասում են, համաձայն են տալ համարեա բոլոր պատերազմական նաւերը։ Կայսրը և կայսրուհի-մայրը լուրջ կերպով նախագուշացնում են Լի-Խունգ-Զանգին չը վերադառնալ, մինչև որ խաղաղութեան դաշն չի կապվի, և պախարակում են նրան այն բանի համար, որ նա ծածկում էր Զինաստանի տխուր դրութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մարտի։ Հակառակ արտասահմանեան տեղեկութիւններին, «Ռուսաց հեռագրական գործակալութիւնը» ճիշդ տեղեկութիւնների հիման վրա, հաղորդում է, որ չինական կառավարութիւնը, խաղաղութեան մասին բանակցութիւնների համար դիմեց միայն չորս պետութիւնների օգնութեանը, այն է Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Մեծ-Բրիտանիայի. միևնոյն ժամանակ չինական դեսպաններին յանձնարարված է միջնորդել պետութիւնների միջամտութեան մասին յօգուտ Զինաստանի ցամաքային կալուածքների անձեռնմխելիութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մարտի։ Ի յիշատակ Նոցա Կայսերական Մեծութիւնների պսակադրութեան, թագաւոր Կայսրը ցանկութիւն յայտնեց ընծայել արծաթէ մէդալներ այն անձանց, որոնք ներկայ էին Բարձրագոյն ելքի ժամանակ Ձմերային պալատում 1894 թվի նոյեմբերի 14-ին, և այն պատգամաւորութիւնների բոլոր անդամներին, որոնք զանազան ժամանակներ շնորհաւորութիւններ են մատուցել Նոցա Մեծութիւններին այդ արժանայիշատակ տօնի առիթով։ Մէդալի նկարը Բարձրագոյն հաստատված է։ Մի երեսի վրա նկարված կը լինեն Նոցա Մեծութիւնների պրոֆիլները, միւս երեսի վրա—պսակադրութիւնը։ Մեդալը պատրաստ կը լինի մի քանի ամսից յետոյ։

Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչ ճանապարհ ընկաւ դէպի Ալժիր։

ԿՕՊԵՆԻ, 4 մարտի։ Թագաժառանգ Ցէսարեվիչ ճանապարհ ընկաւ դէպի Ալժիր։

ՊԱՐԻԶ, 4 մարտի։ Մարտի 19-ին սպանիական զինուորական նաւը երկու արգամ հրացան դարտակեց ամէրիկական «Alliance» շոգենաւի վրա, որը իսկոյն բարձրացնելով դրօշակը, շարունակեց իր ճանապարհը։ Այն ժամանակ սպանիական զինուորական նաւը սկսեց հետամուտ լինել «Alliance» շոգենաւին և 25 մղոն հեռաւորութեան վրա, երեք անգամ թնդանօթ դարտակեց, առանց, սակայն վնաս հասցնելու շոգենաւին։

ՄԱԴՐԻԴ, 4 մարտի։ Միացեալ Նահանգների դեսպանը բաւարարութիւն պահանջեց սպանիական կառավարութիւնից, «Alliance» շոգենաւի գործի առիթով։ Դեսպանի ստացած հեռագրի մէջ ասված է, որ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը սպասում է, որ Սպանիան անյապաղ ցաւակցութիւն յայտնէ պատահածի առիթով։ Դեսպանին հրամայված է պահանջել, որ սպանիական կառավարութիւնը անյապաղ ամենաճիշդ հրահանգներ տայ սպանիական նաւատորմին, որպէս զի սպանիական նաւերը չը խանգարեն ամէրիկացիների օրինական առևտուրը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մարտի։ Լրագիրները հաղորդում են, որ գերմանական դեսպան Վերդէր յետ կը կանչվի իր պաշտօնից և ուրիշ պաշտօն կը ստանայ։ Վերդէրի յաջորդ համարում են կոմս Հէրբերտ Բիսմարկին կամ Բրիւսելի դեսպան կոմս Ալվենսլեբենին։

ՊԱՐԻԶ, 5 մարտի։ Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչ ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։

ԲԵՐԼԻՆ 5 մարտի։ «Post» լրագիրը հաղորդում է, որ Հիւսիսային ջրանցքի բացումը նշանակված է յունիսի 19-ին։ Բացումի նախընթաց օրը կայսրը, պրինցները և հիւրերը, որոնք հրաւիրված են ջրանցքի բացմանը, ներկայ կը լինեն այն տօնախմբութեանը, որ կը կազմի Համբուրգ քաղաքը։ Կիլում գտնվող զինուորական նաւերի բոլոր օֆիցերները կը հրաւիրվեն այն տօնախմբութիւններին, որոնք տեղի կունենան կայսերական «Hohenzollern» և «König Wilhelm» նաւերի վրա։ Նաւերի ջրանցքով անցնելու ժամանակ դէպի Բէնսբուրգ տեղի կունենայ զօրահանդէս։

Մեռաւ կենտրօնի կուսակցութեան առաջնորդ Շորլիմէր-Ալստ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 3-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	93 ր.	05 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	50 »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	82½ »
Ոսկի — — արժէ . .	7 »	43 »
Մաքսային կուպօններ — . .	148 »	25 »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	5 »	7% »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	— »	— »
— — — — 2-րդ .	— »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
4% պետական բէնտա	99 »	25 »
5% ոսկեայ բէնտա 1894 թ. . . .	164 »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	— »	— »
— — — 3-րդ —	— »	— »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	231 »	— »
— — երկրորդ —	225 »	— »
5% պետական երկաթուղ. բէնտա.	102 »	— »
4% ներքին փոխառութեան . . .	98 »	75 »
4½% գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի	102 »	— »
Աղն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. գրաւ. թղթ. — — .	211 »	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	101⅝ »	— »
4½% գրաւական թղթեր կալուած.	— »	— »
Փոխ. կրեդիտ. ընկերք. մետալ.	151 »	— »
— — — թղթադ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	102 »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	102⅜ »	— »
Օդէսայի — —	100⅜ »	— »
Թիֆլիսի — —	— »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	99 »	— »
— — Քութայիսի — .	101 »	— »

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄԷ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Գր. Վ. Շատ ցաւում ենք, որ ձեր յօդուածը չենք կարող տպագրել։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. Գ. Զ. Ձեզ ուղարկեցինք խնդրած համարները։ Ձեր գրածը ամբողջապէս լոյս չը կարողացաւ տեսնել։

ՐՈՒՍՁՈՒԿ. Երիտ. ընթերցասիրաց ընկերութիւնը Ձեզ «Մշակ» ուղարկել է։ Ձեր փողերը, համաձայն ձեր խնդրքի, 5 ռուբլի յանձնեցինք «Տարազի» և 5 ռուբլի «Մուրճի» խմբագրութիւններին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսան
ՍԱՐԿ. Յ. ՃՈՒՂՈՒՐԵԱՆԻ
„ՄՈՌԱՑՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ"-Ի
Ա. և Բ. գրքերը։ Վաճառվում են կենտրոնական գրավաճառանոցում, Մակար Զըմշկեանի և Լինճ մօտ։
Ա. գիրքը արժէ 60 կոպ. Բ. 50 կ. միասին 1 ռուբլի։ Միմիայն Ա.-ից գնողներին հարիւրին զիջվում է 30%, երկրորդին 20%։
Հասցէս՝ Тифлисъ, Николаевская ул., д. Алелова № 10.
Սարկ. Յ. ՃՈՒՂՈՒՐԵԱՆ
(№ 26) 2—6

Կիրակի, մարտի 12-ին 1895 թ. առաւօտեան ժամը 11-ին, ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի դահլիճում նշանակված է.

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ընկերութեան վարչութիւնը խնդրում է ընկերութեան անդամներին շնորհ բերել ներկայ լինելու յիշեալ ժողովին։

Ժողովի պարապմունքներն են՝

1) Անցեալ 1894 թ. ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը. 2) Անցեալ 1894 թ. ընկերութեան եկ և մտից հաշուի քննութիւնն ու հաստատութիւնը. 3) Սոյն 1895 թ. նախահաշուի քննութիւնն ու հաստատութիւնը. 4) Վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագրի ընթերցումը. 5) Ընկերութեան պատուաւոր անդամի մասին վարչութեան առաջարկութիւնը. 6) Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի հինգերորդ բաժանման բացման մասին վարչութեան առաջարկութիւնը։ (№ 27) 1—2

ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆ
Շուտով տեղի կունենայ
ԿՕՆՑԷՐՏ
Աշխարհումս միակ հռչակաւոր լիրիքական տէնոր
ՄԱԶԻՆԻԻ
Տեղերի համար ստորագրութիւնն ընդունվում է Բ. Միրիմանեանի երաժշտական դէպօում, Դվորցովայա փողոց։ 1—1

ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԸ ՀՐԴԵՀԻՑ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ տեղեկացնում է ընկերութեան պ.պ. անդամներին, որ համաձայն կանոնագրութեան § 37 1894 թվի ՀԱՇԻՒԸ ընկերութեան գործերի գրութեան մասին գրքերի և դոկումէնտների հետ միասին բացված է վարչութեան շինութեան մէջ ցերեկվայ 1 ժամից մինչև 3 ժամը կէսօրից յետոյ, ապահովագրողների քննութեան համար։ 1—1

ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿՈՎ
ՀԱԶՈՒԱԳԻՒՏ ԲՈՒՍԵՂԷՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ
Երևանեան հրապարակի վրա, Տէր-Աստուրովի տանը
ԵՂԲ. ՄԱՐԻԳՕ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲԷԼԳԻԱՑԻՑ
Այգեպահութիւն, պտղապահութիւն և ծաղկապահութիւն, պատիւ ունեն ծանուցանել, որ բերել են ահագին քանակութեամբ վաճառելու համար բուսեղէններ և զանազան տեսակ պտղաբեր ծառեր։ Ահագին քանակութեամբ ծաղկաստներ և թուփեր։ Ցանձն են առնում նմանապէս այգեշինութիւն և ծառերի ու թուփերի տնկելը, որոնք կը գնվին իրանց մօտ։ Ստացված են դարձեալ ուրիշ բուսեղէններ։
(№ 24) 3—5

„Ольфакторіумъ Нудилинъ"
М. Л. ЖИРМУНСКАГО.
ՄԻԱՁՈՅ ԽԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ
բժշկական դէպարտամենտից թոյլատրված
ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ
Ծախվում է 40 կոպէկով
Դեղագործական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ՝ Թիֆլիսում։
(№ 22) 3—30

Երևանեան հրապարակի վրա, Տէր-Աստուրովի տանը, բացված է
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ
Նկարիչ Ղազար ԱՐՏԱՁԵԱՆԻ՝ մասնակցութեամբ նկարիչներ ԲԱՇԻՆՋԱԳԵԱՆԻ, ԳԱԲԱԵՎԻ, ԶԱՆԿՕՎՍԿՈՒ, ԿՕԼՋԻՆԻ, ՊԱԳԱՐԷԼՕՎԻ, ՇԱՄՇԻՆԵԱՆԻ, քանդակագործ Խօդոբովիչի և այլոց։
Պատկերահանդէսը բաց է առաւօտեան 10 ժամից մինչև երեկոյեան 6-ը։
ՄՈՒՏՔԸ արժէ 30 կ., աշակերտների համար 15 կ., մուտքի մի մասը յատկացրած է Թիֆլիսի գեղարուեստական դպրոցին։ (№ 21) 5—5

ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՅՈՑ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՖԹՎԱՆՈՒՄ
Խնդրում ենք հայ խմբագիրներին, հեղինակներին և բարեսէր անձանց, որ իրանց օգնութիւնը չը զլանան Սալմաստի հայոց այս միակ գրադարանին, որի ճոխացումը ըզգալի կերպով կը նպաստէ գաւառիս կրթական գործին։
Խնդրում ենք նուիրատուներին դիմել այս հասցէով. Персія, Salmast, Սալմաստի հայոց գրադարանին, Հաֆթվանում։
Սալմաստի Հաֆթվան գիւղի գրադարանի վարչութեան։ (№ 10) 7—10

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒՔԻՆԸ
ԳԻՆԸ 20 ԿՈՊԷԿ
Թիֆլիսում վաճառվում է „Մշակի" խմբագրատանը, նոյնպէս և Դվորցովայա փողոցի վրա հետևեալ խանութներում՝ Եփրեմ Ծատուրեանի լամպաների մագազինում և Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում։ (№ 144)

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Марта 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.